ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 08 դեկտեմբերի 2023թ.

Ժամը 11:30

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Սեդրակ Կիրակոսյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

Բացող անդամներ՝ Վիոլետա Վարդանյան, Հայկ Հովհաննիսյան

Գնահատող անդամներ՝ Լարիսա Առաքելյան, Տաթևիկ Պալոյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման բացման մասին.

1.1 Հայտ ներկայացնելու մասին՝ 28.11.2023թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, ինչպես նաև հրավերը հրապարակվել է www. gnumner.am պաշտոնական կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2023 թվականի դեկտեմբերի 08-ին, Ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման վերաբերյալ պարզաբանումներ և հարցումներ չեն եղել:

1.4 Գնման հայտով սահմանված գնման առարկայի քանակը և գինը.

Չափաբաժնի h/h	Անվանումը	Հաստատված քանակը	Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտով նախատեսված գին (ՀՀ դրամ)
1	«ԱՊՊԱ» ծառայություններ	1	3100000

2.Գնանշման հարցմանը հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով հայտարարված գնանշման հարցմանը մասնակցել են թվով 3 մասնակից.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	Էլ. հասցե	Հեռ.
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	info@silinsurance.am	060-54-00-00
2	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	info@ligainsurance.am	060-62-20-20
3	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	nairi@imnairi.am	060-50-00-60

3.Բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայության, դրանց համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և ներկայացված գնային առաջարկների մասին.

3.1.Հրավերով սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնման հայտ կազմել և ներկայացրել են ներքոհիշյալ 3 Մասնակիցները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը /անունը/	ՀՎՀՀ/ՀԾՀ
1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	02551341
2	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	02589581
3	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	00031904

3.2 ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար պարտադիր ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման ընթացքում՝ հանձնաժողովն ուսումնասիրեց Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը Հրավերով սահմանված պահանջներին և որոշում կայացրեց՝ բոլոր երեք Մասնակիցների հայտերը գնահատել բավարար:

3.3 Յուրաքանչյուր Մասնակցի կողմից առաջարկված գնային առաջարկը ներկայացված է սույն արձանագրության N1 Հավելվածում (կցվում է):

4. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2024թ.-ի ընթացքում պարտադիր ապահովագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով, էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով ընթացակարգի N 1 չափաբաժնի գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

4.1 Հաշվի առնելով՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.7 կետն, ըստ որի՝ «Եթե հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների գները գերազանցում են գնման գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ վերջինիս հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականություններն ուժի մեջ են մտնում գնման գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում, համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ ծառայությունների մատուցման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրն ընկած ժամանակահատվածով: Սույն կետի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող վաթսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Սույն կետի պահանջները չեն կիրառվում, երբ հայտեր ներկայացրել են մեկից ավել մասնակիցներ և միայն մեկ մասնակցի հայտն է գնահատվել հրավերի պահանջներին բավարար», **N 1 չափաբաժնի մասով ընտրված (հաղթող) մասնակից ճանաչել «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին:**

4.2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով գնման ընթացակարգի N 1 չափաբաժնի մասով "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու

որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

4.4. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Հանձնաժողովի գնահատող անդամների կողմից ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝	_____	**Ս. Կիրակոսյան**
Քարտուղար՝	_____	**Ն. Աբովյան**
Գնահատող անդամներ՝	_____	**Վ. Վարդանյան**
	_____	**Հ. Հովհաննիսյան**
Բացող անդամներ՝	_____	**Լ. Առաքելյան**
	_____	**Տ. Պալոյան**

Հավելված 1

Չափա բաժին	Չբաղ. Տեղ	Ընկերություն	Միավոր առավելագույն արժեքների հանրագումար (ՀՀ դրամ)	Գնային առաջարկ (ՀՀ դրամ)		
				Արժեք	ԱԱՀ	Գին
1	1	«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ	3100000	3168000	0	3168000
1	2	«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ		3405000	0	3405000
1	3	«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ		3690000	0	3690000

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-24/2» ծածկագրով ԳՀ միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված ընթացակարգի մասնակիցներից 3-ն իրենց կողմից ներկայացրած գնային առաջարկները ներկայացրել են առանց ԱԱՀ-ի: